

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿՈՎԿԱՍԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1861 նոյեմբեր 10 Վարազայ սրբազան սարէն՝ էլանք ի ծեր Մասիս. ակն ունելով, որ այն տապանակիր Մասեաց նաւահանդիսատ մեր խոննած թւերուն հանդիստ տայ: Ճանապարհի ձմեռնային դժուարութեան դէպքերը չիշելով եօթն օրէն զկնի մտանք սուրբ Էջմիածին: Երկու ժամէն զկնի Ինգնաախոս հայր սուրբին հետը ի միասին Վեհափառ Սրբազանին ներկայացանք. ինչպէս յառաջադոյն դրած եմ. խօսեց կրկնեց այն բաները ինչոր Պօլիս շատ անգամ կրկնարաներ էր. նորալուր բաները միայն իւր նեղ վեհարանափակ վիճակին արբտունչներն էին, կը չիշէր ու կը հառաչէր իւր նախնի կենաց ազատ կենցաղավարութեան մասերը: Շատ անգամ ներկայացանք նոյն խօսից կրկնութեան ձայները դարձեալ լսեցինք:

Էջմիածնայ կղերք նախանձու նախատօնակ սկսեցին կատարել քանի մի աւուր մէջը որ վերջի հանդիսի զուշակութիւն մի էր. այս նախատօնակի արարողութիւնը բերանացի աստձութեան կը թողու՞մ եթէ Աստուած յաշողէ: Մէկ շաբաթէն զկնի էլանք Էջմիածնէն դէպ 'ի Տփիսիս երթալ. նոյեմ. վերջի օրերը զրեթէ հասանք և իջևանեցանք Տփիսիոց քաղաքամիջի վանքն որ Առաջնորդարանն է: Զալսլեան Սարգիս արքեպիսկոպոսն հիւրասիրեց զմեզ ինչպէս պարտն էր. մանաւանդ երբ որ Էջմիածնայ հիւրասիրութեան հանդամանքներու պակասութիւնը իմացած էր: Յառաջիկայ կիրակի օրը բաւական աստեւարանեց Արժւոյ ձեռնարկութեան և նպատակին համար: Հետեւեալ օրը քսան թապաղայ թուղթէ ստորադրութեան ցու-

ցակմի շինեց և ինքն առաջին հանդիսացաւ իբրև պարագլուխ ազգասիրաց 100 մանէթ գրեց մէկէն ցուցակին սկիզբն. կանչեց օրինաւոր գործունեայ քահանայ, մէկն ծանրաշարժ և անհամոզարան, միւսն թեթև ու ծաղրածու: Այս բազմաթերթ ստորագրութեան ցուցակը որ մեր մուրացկանութեան գրեթէ շատ դուժար պարունակող տօպրակ մի էր, երկու ամիսի չափ Տրփխիսեցի արհեստաւորաց մէջ շրջեցուցին խանութ խանութ նոյն երկու քահանաները: Արժւոյն սիրտը ուրախութենէն կը թրրթրուար և կը կարծէր որ մեծամեծ լեռներու գուժարները պիտի ծնանի իւր լայնափոր տօպրակը. ի՞նչ և ահա երկու ամիսէն ղկնի բաց Ջալալեանի 100 մանէթէն յղացաւ և երկնեաց միայն 161 մանէթ, բոլոր արհեստաւորաց ազգասիրական նուէրքը: Տփխիսոյ մեր մտերիմ բարեկամները յառաջուց գուշակեցին, որ Ջալալեանի այսօրինակ ձեռնարկութիւնը չնչին մուկ մը պիտի ծնանէր. այլ թէ վասն է՞ր, պատճառը մի հարցնէք, ես էլ թող կուտամ ժամանակին ստոյգ պատմել:

Խորհրդական մտերիմ ազգասէր կանառները չը յօժարեցան բնաւ այս ստորագրութեան մէջ անցնիլ, հապա իրենք իւրաքանչիւր առանձին իւր ընկեր յորդորելով ժողովեցին փոքր փոքր գուժարները և մեզի յանձնեցին. որոնց բոլորին ցուցակը ձեր ազգասիրութեան յղելու արժան կը դատեմ: Երեք ամիս շարունակ Տփխիսոյ նշանաւոր եկեղեցեաց բեմերուն վերայ գրեթէ ազգասիրական բարձրագոյ աղաղակներով լեցուցինք, որոնց ազդեցութիւն և առարկաները խիստ պատշաճ էին Կովկասեան հայոց: Հայրենասիրական հառերը լսելու Տփխիսոյ հայկազանց ականճները շատ աշխոյժ են, մինչև իրենց սիրտ, ոգին և ոսկորներու մէջ թափանցեց արժւոյն ախորժակեան հայրենալուր ծայրերը: Սերմանահան մշակի մի նման լիաբուռն ցանցի ազդային յառաջադիմութեան սերմերը: Այլ աւանդ, գաղտնի խորամանկ թռչունները քաղեցին Արժւոյն վաստակը. թող չիտուին հարիւրաւոր պտղաբերութեան արդիւնքը վայելել: Բայց կեցցե՛ն ազգասէր սիրտերու անդաստաները, որոնք իբրև պարարտ երկիրը ընդունեցին սերմերը ուր վաղվաղակի արդիւնքները բերին:

Բնիկ Վասպուրական երկրացի Երամ աղա Արծրունեան, որ քաղաքական մասերու մէջ քաջ խորագէտ, ազգասիրական հանդէսներու մէջ միշտ մտածող, ուսումնական և լեզուագէտ մանաւանդ դաղղիականին, մէկ խօսքով Տփխիսոյ հայկազանց նախապատիւ անձ մի է: Սա մեզի մեծ մարդասիրութիւնը ցոյց տալէն զինի, իւր ազգասէր սրտի խորհուրդները բացաւ. Խնչ. կուզէ ինքն իւր Վասպուրական հայրենեաց պարտքը վճարել. բաց Վարազայ դպրոցէն քանի մի պատշաճաւոր վանքերու մէջ ալ դպրոց բանալ տալ և Վարազայ այժմեան ժառանգաւորաց դպրոցին հետը կցել ուրիշ նոր դպրոց մնալ որուն մէջ երկրագործութիւն, լեզուագիտութիւն և ուրիշ բարձր դասեր տրուին և հեռաւոր տեղերէն թողակաւոր աշակերտներ առնուին:

Այս մեծ ձեռնարկութեան և նպատակին համար ինքն անձամբ ստորագրութիւն մի բացաւ և սկսաւ տունէ տուն շրջիլ. վեհանձնական խոնարհութեամբ իւրմէն քսան աստիճան վար մարդուն քով կերթար կը խօսէր և կը համոզէր: Առաջին կարգի մարդոց 500 մանէթ կը ստորագրէր. մենք այնտեղ եղած ժամանակը հասոյց ստորագրութեան զուժարը մինչև 8000 մանէթի. Տփխիսէն մենք դուրս ելանք էլ չեմ զիտեր բանը ուր վերջացաւ: Բայց աս ալ պէտք է ծանուցանեմ ձեր ազգասիրութեանը որ այս մեծահոգի իշխանին ձեռնարկութիւնը մեր առանձին ստորագրութեան շատ փնաս տուաւ, վասն զի մեծ տարածայնութիւնը ելաւ թէ Տփխիսոյ մէջ և թէ շրջակայ քաղաքները, այսինքն Գարապաղ, Գանձակ, Ագուլլիս և ուրիշ տեղուանքը, թէ Արծրունի Երամ աղան այսչափ զուժար մանէթ ժողովեր է Արծըոյն համար, տարածայնութեան չափազանցութիւն հասուցեր էր մինչ 30000 մանէթի: Ռուսիոյ խորամանկ քաղաքականութեանէն կասկածելով մենք ալ չը կարողացանք հասկննձլ ամեն մարդու թէ Արծրունեանի ձեռնարկութիւնը ուրիշ առանձին նպատակի համար է, մեր այժմեան Վարազայ ժառանգաւորաց դպրոցի հետը վերաբերութիւն չունի: Եւ չիրաւի այսպէս դաշինք դրաւ մեզի հետը նոյն ազգասէրն՝ թէ իմ բացած ստորագրութեանս զուժարէն քեզի կամ այժմեան քոյզ ունեցած դպրոցի մասն չիկայ. ահա ինչ որ

Տփխիսոյ ազդասէրները քու դպրոցին ընծայ տուին մենք ալ մեղի ընկած բաժին միայն 100 մանէթ կը շնորհեմ քեզ (ինքն իւր բացած մեծ ստորադրութեան մէջը 500 մանէթ ստորադրուած էր) դուն պէտք է աշխատիս պարտքերդ վճարելու և քու դպրոցդ յառաջ տանելու: Ինքն որովհետև բնութեամբ յամառ և խիստ ջասմնկոտ լինելով՝ չը կարողացանք համարձակ խօսիլ իրեն թէ՛ քու տարածած ձեռնարկութեանդ համար՝ մեր ստորադրութիւնը ակարացաւ. վասն զի եթէ սպասէր, երբ որ մեք Տփխիսէն ելնէինք, եաքէն բանար ստորադրութիւնը. կարելի էր որ վնաս չը լինէր մեզ. բայց նա ալ այս մտածեց, որ մեր ներկայութիւնը իւրեան սկզբնաւոր ձեռնարկութեանը հարկաւոր է և օգտակար: Աստուած տայ որ զլուխ երթայ իւր ձեռնարկութեան հիմն և շէնքն Աւետարանին առակն իւր վերայ չը կատարուի:

Սկսենք այժմ մեր Տփխիսէն ելլելուն պատմութիւնը, երբ որ Արժւոյն չաջողութեան և յառաջադիմութեան ձայնը կը հասնի Էջմիածնայ կղերաց ականեր օժին նախանձը կը թելադրէ դիրենքը. որով կսկսին պատնառները վնտուել և դանեն այն յօգուածը որ կռնկան մէջ հրատարակուեցաւ ի Տփխիս, ասով կը համոզեն Վեհափառին դիւրահուան միտքը. այնչտի կը խօսեն և այնչտի կը զրգոեն մինչև նորին ողորմածութեան սիրտը մեր վերայ զայթաղեցնելով՝ սաստիկ կոնդակ մի կը զրէ և կը յանձնէ եպիսկոպոսներուն, որպէս զի վաղվազակի Տփխիսոյ քանստորային (հոգևորական ասենին) զրկեն. որուն մէջ այն աստիճան սաստիկ հրամայած էր վեհափառը, որ զԽրիմեանն ռուսաց անողոք զազախներուն յանձնելով Տփխիսէն խայտառակութեամբ դուրս հանեն և մինչև Էջմիածին անարգանօք բերեն: Բայց ադա Գրիգոր Մայենցեան Վաղարշապատցի, (որուն համար կը լսենք թէ մեռած է օրերս) որ մեր բարեկամն և գործակալն էր. կը ներկայանայ Վեհափառին և կը խօսի ազգու կերպով «զուք ի՞նչպէս Տանկաստանի հպատակ հիւր վարդապետի մը համար ազգպիսի խիստ հրամանի կոնդակ մի կղրկես, միթէ արծիւ երկչոտ ապստամբ է, ձեր բարձր հրամանին լոկ ազդարարութիւն մի կարող չէ՞ զինքն ձեր ներկայութեան կոչել: Ասով կը

համոզուի Վեհափառն և մեղծ եղանակի կը փոխէ զիւր առաջի կոնդակն: Մեք արդէն պատրաստուած էինք Տփլիսէն ելլելու, հասաւ այս վերջի կոնդակն, որով կը պատուիրէր քանսիստորային զԱրժիւն վարդապետի Տփլիսէն հանելով լեչմիածին զրկէն: Մեք նամակով մի յայանեցինք Վեհափառին թէ ձեր բարձր հրամանին հնազանդ եմք, ահա կը պատրաստուիմք Գարապաղու նանապարհով ձեր սրբազնութեան ներկայանալ:

Բուն բարիկենդանի կիրակի օրը Տփլիսոյ դրօսասեր և ուրախասեր ժողովուրդ դէպ 'ի եկեղեցին վազեց, որպէս զի Արժևոյն վերջի հրաժարականի ձայնը լսէ: Նոյն առուր մեր խօսած սրտառուչ նատին ազդեցութենէն զրեթէ ժողովուրդեան մեծ մասը յացաւ. հեռեկայ օրը Սարգիս եպիսկոպոս Զալպեան իւր կառէթ լծեց և մեծ պատուով մինչև քաղաքէն մէկ ժամ հեռու դուրս հանեց, յուղարկաւոր եղան մեզի հետք երեսուն քառասունի չափ Տփլիսու ուսումնական և մտերիմ անձինք եռածի կառքերու մէջ նստելով: Խմեցին կախէթու դինին, ու երկեցին Թաղիթեանց Մկրտիչոյ առջն «թէ իմ այլևոր հերքս սենային և այլն»: Կեցեցէններու աղաղակներով զմեզ նանապարհ հանին, հասանք ուղղակի Գանձակը, ուր միայն երեք չորս օրը շարունակ քարոզ խօսելով խիստ սիրալիր հիւրասիրութեամբ մեկնեցանք դէպ 'ի Գարապաղ: Մեծ մարդասիրութեամբ ընդունեցին զմեզ Գարապաղու ազգայինք. զրեթէ եօթնօրը միայն քնացինք շարունակ իրիկուններ քարոզ խօսելով. եկեղեցի երթալու մասին շատ ջերմեռանդ տեսայ այնտեղի ժողովուրդը. մինչդեռ Գարապաղու ազգասէրները ջերմ սիրով կը պատրաստուէին ստորագրութիւն բանալ Արժևոյն ձեռնարկութեան համար, յանկարծ շաբաթ երեկոյին իշու այնտեղ Վեհափառին կրկին կոնդակն, որով խստիւ կը պատուիրէր հոն տեղի քանսիստորային չտայ բնաւ իրաւունս Մկրտիչ վարդապետին տեղւոյդ եկեղեցեաց աստեանս քարոզել, կամ զիւր նպատակն յառաջ ասնել: Այս հրամանը քանսիստորայն մեզի գրով կը յայանէ. մեք ալ մեր հնազանդութեան կամք յայանելով նոյն գրին վերայ պատասխանեցինք պատրաստ եմք դնալու: Կիրակի օրը մինչդեռ ժողովուրդեան բազմութիւնը եկեղեցին լեցուած կը սպասէ ազ-

գլխաւորական նաւերը լսելու, խեղճ Արծիւն առաջնորդարանի սենեկին մէջ մտած կը ողբայ նախանձողաց այսօրինակ հսկածանոց ու չարութեան վերայ. քանիցս մտածեցի որ ձիթենեաց լեռան յաւիտեան տուած՝ ամենաբարձր կոնդակին հրաման գործի դնելով մերժեմ այս ապօրինաւոր հրամանը բայց հնազանդութեան և համբերութեան հողին դիս թելադրեց, որ այս կերպով աւելի պատճառ չտամ հակառակորդներուն ձեռքը: Այս դէպքը թանձր տխրութիւն մի պատճառեց բոլոր Գարապաղցի ազգայնոց սրտին: Նոյն կիրակի օրը Գարապաղէն դուրս ելանք հինգ պատգամաւորներուն հետը, որոնք Էջմիածին կերթային իրենց նոր բացուելիք դպրոցին առաջարկութիւն ընելու Էջմիածնայ սինօթին: Մենք ալ ասոնց հետը ընկերանալով դուրս ելանք առանց բնաւ փող մի առնելու, որովհետեւ Գարապաղցի ազգայնոց սիրտը բոլորովին լքոյց կոնդակին հրամանը ու կաշկանդեց նոցա ազգասիրութեան ոգւոյն շղերը: Աս լսելով պիտի մտածէք թէ Ռուսաստանի հայոց եկեղեցականաց բռնական իշխանութիւնը ճրչափ ներգործութիւն ունի ժողովրդոց վերայ, մինչև անգամ ազգասիրաց ընծայատուր ձեռքերը կը կապէ և Աւետարանին քարոզութեան ազատ դռները կը փակէ դպրաց ու փարիսեցւոց նման:—

Պատգամաւորներուն հետը նանապարհորդելով հասանք Նախիջևան. նոքա մեզմէ բաժանուելով երկու օր յառաջ հասան Էջմիածին. մեք ալ Աւետեաց նախատօնակի իրկուն հասանք: Հիւրընկալ վարդապետն ըստ սովորութեան լուր տարաւ Վեհափառին թէ Խրիմեան եկաւ: Արև մտնալէն զինի, չեմ մեղանջեր եթէ Քրիստոսի խօսածն կրկնեմ այս տեղը, սինօթի խաւարային իշխանութեան սկզբնաւորութիւն եղև, ի՞նչպէս, վարդապետ մի մտաւ սենեակս. քանի մի քաղաքավարի խօսքերէն ետքը դուրցեց այս բանը «Վեհափառին հրաման այս է, որ իրեն քեզ տուած արտօնութեան կոնդակը տաս»: Բարունք, ասացի ու կոնդակն իսկոյն ձեռքը տուի. պահ մի անցնելէ չետոյ հիւրընկալ վարդապետն եկաւ կրկին աւետիս բերելով մեզ. ի՞նչ Վեհափառին հրաման այս է, որ առաւօտ շուտով այս տեղէն դնաս: Ե՛ւս բարուոք, ասացի: Մինչդեռ առաւօտ սուրբ աւե-

տեսաց ամենախմբուլթիւն կը կատարուէր, եկեղեցին կը ցնծար, երկնից հրեշտակն կուսին աւետիս կուտար. պանդուխտ հայոց Արժուին իւր ճանապարհին պատրաստուլթիւն կը տեսնար: Հարցո՞ւր պատճառը՝ ոգի աղբասէր, թէ ի՞նչպէս Վեհափառին զթոա որդիասէր սիրսը այսչափ խստացաւ Արժույն վերայ: Այո՛ խորամանկ չարախօսաց թելադրուլթիւնը մեծ ներգործուլթիւն կնէ դիւրահաւան մտաց վրայ: Էջմիածին մտած ժամանակը քանիմի վարդապետաց խօսեցանք, թէ պէտք է ուսումնական վարդապետներէն յանձնաժողով մի կազմուի. մեք ահա պատրաստ եմք մեր զրած յօշուածին բացատրուլթիւն տալ: Այս լուրը երբոր հակառակորդները իմացան, տղէկ հասկացան, որ անպատասխանի մնալով, այս բանիս ելք իրենց համար ամօթ կը բերէ. ուստի խորամանկ տնօրէնուլթեամբ այսպիսի կարճ ճամբայ մի չափեցին: Թէպէտ մտածեց Արժուր բողոքել և իրաւունք խնդրել. բայց ո՞վ պիտի լինէր այն տեղը Արժույն համար դատաւոր իրաւարար: Վասնորոյ այն նուազին ևս Արժուր հեղուլթեամբ ներեց ու համբռեց:—

Աւետեաց կիրակի օրը մինչդեռ երկինքը Այրարատայ դաշտին զթալով յորդ անծրևներ կը տեղար, Արժուր մայրենի ալթողոյն դրկէն մերժուելով իրրև զաւակ խորթ հայրենի տանէն դուրս կելլեր. կամ Յակոբայ նման եսաւական նախանձոտներուն ձեռքէն միայնակ դէպ ՚ի փախուստ կերթար: Իրիկուն հասանք Երևանայ դաշտի իջևան, չորս կողմէն թափեցան վերաս Երևանու քաղաքին ազգասէր անձինքները. նօքա կը հարցնէին և Արժուր կը պատմէ այս անցքերու տեղեկուլթիւնները. կը լսեն, կը ցաւին և կը նդովեն միաբերան, այսպիսի ինվիզիտական բռնակալուլթիւնը: Կաղաչեն և կը թախանձեն ամենքն որ դոնէ վերջին հայրենասիրական ճառ մն ալ իրենց եկեղեցին խօսէինք. պատասխանեցի զուարճախառն քաղաքալարուլթեամբ. թէ Արժուր սրաթուիչ է. կը խօսի և կը փախչի հալածանաց ձեռքէն. բայց դուք խնայեցէք ձեր առաջնորդին. որ պատասխանատու պիտի լինի թոյլուլթեան համար՝ իւր վեղար և փիլոն առնելով ու զնալով Էջմիածին: Խօսքերուս համադուեցան ու երկու ժամու չափ ոտքի վրայ կայնելով մտիկ կնէին հայրենա-

սիրական յորդորներուս. զոր լեառոյ պիտի հրո՞ւտարակեմ, իջևանի սենեկի տանիքն ալ մէկ կողմէն թէպէտ սաստիկ կը կաթեր բայց կարօտ ականճներու համար կաթիլները զուարճութիւն էր: Վերջապէս սխրութեամբ բաժանուեցայ Երևանցի ազնիւ քաղաքացիներէն ու կրկին վերադարձայ Նախիջևան: Եւ որովհետեւ մերձ էր աւաղ շարթու սրտառուջ շարականի օրերը, աճապարեցի Աղուլլիս երթալ և սուրբ Զատիկի մեծահանգէս օրերը այնտեղ անցունել: Աղուլլիս հասնելուն պէս տեղւոյն իշխանները մեծ հիւրասիրութեամբ ընդունեցին զմեզ: Զարմանք մեծ. չը հարցնելով ընաւ, թէ կոնդակ ունի՞ս և այլն:

Ողորմելի հակառակորդ կղերք կը կարծէին, որ Արծիւր առանց կոնդակի հիւրասիրութեան մեծարանքէն կը մերժուի. և չը մտարեցեցին թէ ազգն զարծիւն և իւր ողին առանց կոնդակի ճանչցեր է: Աղուլլիսի եկեղեցիներու մէջ սկսեց Արծիւր ձիթենեաց լեռան Յիսուսին տուած ազատութեան կոնդակին դրոշակը բռնալ. մինչև 'ի նոր կիրակին քարոզեց շարունակ Յիսուսի խաչին, յարութեան և հայրենեաց վերաբերեալ քարոզները: Կեցցէ՛ աղա Աւետիս Աքուլցեցի հարուստ վաճառական, որն որ մեծ մարդասիրութեամբ հիւրասիրեց զԱրծիւր: Ինքն Տփլիս եղած ժամանակը Արծրունեանի ստորագրութեան արդէն հինգ հարիւր մանէթ դրուած էր, բարեբախտութեամբ նոյն օրերը Տփլիսէն հայրենիք վերադառնալով կրկին անդամ բաւական օղնեց մեզ, իւր հայրենակիցներ յորդորելով և փոքր ստորագրութիւն մի բանալով մինչև, չորս հարիւր մանէթի չափ ժողովեց առանց մեղի և մեր ետևէն զրկեց Դաւրէժ: Մեծ շնորհակալութեամբ ելանք Աքուլլիսէն և հասանք ողջութեամբ 'ի Դաւրէժ Ռուսիոյ սահմանէն անցնելով Պարսկաստանի սահմանը: 15 օրէն աւելի քարոզեցինք Դաւրէժու եկեղեցիները, թէպէտ քանի մը նշանաւոր զգայուն ազգասէրներ կան, բայց զրեթէ մեծ մասին ականճները խուլ են դեռ հայրենասիրական ծայները լսելու: Դաւրէժու մէջ թէև չորս հարիւր տունի չափ հայոց բնակիչ կայ, բայց քանի մի տուն հազիւ նշանաւոր հարուստ կամ վաճառական կը գտնուին. քնացեալ մեծ մասը արհեստաւոր միջակային մարդիկներ են: Իսկ վաճառականները, ո-

րոնց թիւ 15 հողիի չափ կը հասնի, որ առևտրական ծասի համար Դաւրէժու խաներու մէջ կը կենան. սա վաճառական խուճրի մէջէն աղա Մատթէոս Նաղարեանց և ուսուժնասէր Յովհաննէս Շեխեանց, որն որ աղա Դուկասի հարադատ եղբայրն է: Այս երկու անձինք, իբրև պարագլուխ արգասէր հանդիսանալով միւս հայրենակցաց մէջը՝ Դաւրիժէն մեկնելու ժամանակը միաւուր կարճ միջոցի մէջ ստորագրութիւն մի բանալով մինչև երեք հարիւր ճանէթի չափ, ստորագրեցին միայն իրենց հայրենակիցներուն ձեռքով: Ասով արդարև փոքր ինչ Գարապաղցոց սղգասիրական պարտք վճարեցին: Այս յիշեալ երկու եռանդոտ անձինքը որոնք հայրենի յառաջադիմութեան համար վառուած լինելով խոստացան Վասպուրական Արժւոյն թերթերուն համար աշխատել և աւելի բաժանորդ դրել տալ Պարսկաստանի հայերէն և ճանաւանդ հայրենակից Գարապաղցիներէն: Դաւրիժէն ելլելով քանի մի օր ևս Մալմաստու գաւառին մէջ հիւր մնացինք, և յաւնիւի վերջի օրերը ողջամբ մեր հայրենիք ողջունեցինք: Անցաք ընդ հուր և ընդ ջուր նախանձոտ հալածիչներուն. Սասունձոյ յաջողութեամբ հասանք Վարուզայ հանդիսաւ:—

Այսչափ է ահա մեծարոյ ոգի արգասէր, մեր Ռուսաստանի նանապարհորդութեան համառօտ պատմութիւնը, թող տալով կամ լռութեան մէջ փակելով շատ նշանաւոր հանգամանքներ և դէպքերը, զորոնք եթէ աէր յաջողեսցէ, կամ զրով կամ բերանացի պատմութեամբ, ժամանակին կը տեղեկանայք:

Առ Տէր հանգ. Վեհ. Տ. Տ. Մկրտիչ Կաթուղիկոսի ներկայ յօդուածը մենք ստացել ենք Տրապիզօն եղած ժամանակ հանգ. Գ. Եպիս. Սրուանձտեանի թղթերից. և երբ քանի մի տարի առաջ ցանկանում էինք տպել «Լուծայի» մէջ և այդ մասին ղեկուցինք Վեհին, նա արգելեց մեզ տպագրել քանի որ ինքը կենդանի է:

Գ. Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ